ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

30.07.2024թ.

Մեղրի համայնք, ք. Ագարակ

2024 թվականի (հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Գարեգին Նժդեհի 5/8) տեղի ունեցավ հուլիսի 30-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի վարչական շենքում տեղի ունեցավ հանրային լսումներ «Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի «Ագարակի բացահանքի նախագծի փոփոխություններ՝ առանց արտադրողականությունը ավելացնելու» նախագծի վերաբերյալ՝ 1-ին փուլ:

Օրակարգ՝

Նախագծի համառոտ ներկայացում

Հարցեր ու պատասխաններ

Ելույթներ

Որոշման ընդունում

Հասարակական լսումների մասնակիցների ցուցակը կցվում է:

Մեղրի համայնքի ղեկավար Խ.Անդրեասյանը, հակիրճ ներկայացրեց քննարկման թեման, շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցությունն ապահովելու համար: Այնուհետև Խաչատուր Անդրեասյանը խոսքը փոխանցեց նախաձեռնող կողմի՝ «Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ ի ներկայացուցիչ Գարիկ Գրիգորյանին:

«Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի շրջակա միջավայրի պահպանության ճարտարագետ Գ.Գրիգորյանը համառոտ ներկայացրեց նախագիծը:

Նա նշեց, նախագծի իրականացումը պայմանավորված է բացահանքի հյուսիսային հատվածում առաջացած դեֆորմացիայի խնդիրը և հետագա սողանքային երևույթները բացառելու հանգամանքով, ինչն էլ իր հերթին կապահովի կոմբինատի հետագա բնականոն գործունեությունը:

Հնչեցին հարցեր և պատասխաններ:

Մեղրի համայնքի ղեկավար Խ.Անդրեասյան. ինչ է իրենից ներկայացնում դեֆորմացիա ասվածը:

«Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի երկրաբանա-մակշեյդերական բաժնի պետ Գրիգոր Մաիլյան. նախագիծը ենթադրում է բացահանքի ուղղությունների փոփոխություն՝ հիմնականում հյուսիսային ուղղությամբ, այն հանդիսանում է սողանքային գոտի, հետագա դեֆորմացիայի ռիսկերը նվազեցնելու և հանքը շահագործելու նպատակով մինչև 1120 հորիզոնը կատարվում է թեթևացում:

Մեղրի համայնքի ղեկավար Խ.Անդրեասյանը իր ելույթում ևս մեկ անգամ նշեց Ագարակի ՊՄԿ-ի և համայնքի համագործակցության կարևորության մասին, որն

արդեն իսկ գոյություն ունի, ինչպես նաև նշեց, որ ողջունելի է կոմբինատի ակտիվ գործունեությունը:

Որոշեցին համարել հանրային լսումը կայացած: Համայնքը որոշեց հավանություն տալ ներկայացված նախագծին:

Մեղրի համայնքի ղեկավար Խ.Անդրեասյան

«Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ա. Բեյլան